

Հայտարարություն ՀՀ արդարադատության նախարարության կողմից ԶԼՄ-ների պարտադիր հաշվառման ընթացակարգ նախաձեռնելու կապակցությամբ

01 հուլիսի 2019թ., Երևան

Ս. թ. հունիսի 28-ին Կառավարության e-draft.am կայքում քննարկման է դրվել «Զանգվածային լրատվության մասին» և երկու այլ ՀՀ օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրինագծերի փաթեթ, որոնցով նախատեսվում է մեզանում ներմուծել ԶԼՄ-ների հաշվառման ընթացակարգ: Այս նախաձեռնությունը հետադիմական մոտեցումներ ունի եւ հակասում է լրատվական դաշտը կարգավորող օրենքների բարեփոխման հայեցակարգային սկզբունքներին:

Դեռևս 2000-ականների սկզբին լրագրողական հանրությունից մեծ ջանքեր պահանջվեց, որպեսզի իրավահարաբերությունների պրակտիկայից դուրս բերվի լրատվամիջոցների գրանցման ինստիտուտը, քանզի այն սահմանափակում էր ազատ արտահայտվելու իրավունքը եւ իշխանության ձեռքում ԶԼՄ-ների նկատմամբ խտրականություն դրսևորելու գործիք էր ծառայում: Անցած տարիներն ապացուցել են 2003թ. ընդունված օրենքի առաջադեմ լինելը, ինչպես նաև այն, որ ոլորտի զարգացման համար լրատվամիջոցների գրանցման կամ հաշվառման անհրաժեշտություն չկա: Ավելին՝ գրանցման ինստիտուտից հրաժարվելը հայաստանյան ԶԼՄ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրության ուժեղ կողմերից մեկն են համարում նաև միջազգային կառույցները, և հաշվառման ընթացակարգի կիրառումը անկասկած կգնահատվի որպես հետընթաց:

Առաջարկվող օրինագծերի փաթեթն անընդունելի է նաև այն պատճառով, որ մասնագիտական շրջանակներում քննարկումներ են ընթանում ԶԼՄ հասկացությունը ժամանակակից իրողություններին համապատասխանեցնելու, դրանից բխող իրավահարաբերությունները հստակեցնելու և «Զանգվածային լրատվության մասին» օրենքում անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու նպատակով: Այս գործընթացի համատեքստից ոլորտի կարգավորման շատ մասնավոր մի խնդրի առանձնացումը խիստ անարդյունավետ և խոչընդոտներ առաջացնող քայլ է:

Մենք՝ ներքոստորագրյալ լրագրողական կազմակերպություններս, ի գիտություն ենք ընդունում նախագծերը հեղինակած Արդարադատության նախարարության հավաստիացումներն առ այն, որ հաշվառման նպատակը Պետեզիստի տվյալների բազան ԶԼՄ-ների համար անվճար դարձնելն է, իսկ e-draft.am-ում օրինագծերի տեղադրումը՝ դրանց հանրային լայն քննարկումների առաջին քայլը: Այդուհանդերձ, ստիպված ենք հիշեցնել, որ հասարակության, այդ թվում՝ անկախ փորձագետների մասնակցությունը կարևոր որոշումներ կայացնելու գործընթացին ենթադրում է

նրանց ներգրավումը շատ ավելի վաղ՝ գաղափարների ու կարծիքների քննարկման և նախագծերի մշակման փուլերից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պահանջում ենք.

- հիշյալ օրինագծերի փաթեթից հանել ՁԼՄ-ների հաշվառում նախատեսող դրույթները և չփոխկապակցել դա լրագրողներին Պետոեզիստրից անվճար տեղեկություններ տրամադրելու հետ,
- լրատվամիջոցների գործունեությանը և տեղեկատվության ոլորտին վերաբերող ցանկացած նոր օրենսդրական նախաձեռնություն կամ գաղափար նախ դարձնել փորձագիտական քննարկման առարկա, այնուհետև՝ լրագրողական հանրության ու քաղաքացիական հասարակության հետ համատեղ աշխատել օրինագծերի վրա:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՄՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ
ԻՆՖՈՐՄԱՑԻՍՅՈՒՄԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ – ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊՍԳԱՅԻ» ՀԿ
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ
ԳՈՐԻՄԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ